ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«03» 12 2025 թ. Թիվ 274-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 118-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների, այլ պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 118-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքում Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության աջակցող բաժնից առանձնացման եղանակով ստեղծել Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների

քննության բաժնի փաստաթղթաշրջանառության կազմակերպման բաժին՝ կատարելով համապատասխան փոփոխություններ հաստիքացուցակում:

2. Հրամանի N 1 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի փաստաթղթաշրջանառության կազմակերպման բաժին.»:

3. Հրամանի N 2 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի աղյուսակում.

1) 2-րդ կետում «9» թիվը փոխարինել «4» թվով.

2) 3-րդ կետում «5» թիվը փոխարինել «4» թվով,

3) 4-րդ կետում «4» թիվը փոխարինել «3» թվով, իսկ 6-րդ կետում «20» թիվը՝ «13» թվով:

4. Հրամանի N 2 հավելվածի 7-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի փաստաթղթաշրջանառության կազմակերպման բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	4
	Տեխնիկական սպասարկում	
3.	վարորդ	1
4.	հավաքարար	1
5.	ԸՆԴԱՄԵՆԸ	7

»:

5.Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի փաստաթղթաշրջանառության կազմակերպման բաժինը միացնել Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնին և ստեղծել Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության բաժնի աջակցող բաժին:

6. Սույն հրամանի 5-րդ կետն ուժի մեջ է մտնում սույն հրամանի 1-ին կետով նախատեսված կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոնները սահմանված կարգով զբաղեցնելու օրվան հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ